Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ ՓԲԸ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ություն N 3
ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար 50մթն. ճնշման օդի կոմպրեսորի ձեռքբերում

Գնման ծածկագիրը-**ՔԳՀԿ 05/25**

Գնման տեսակը-**գնանշման հարցում**

Գնումը ներառված է ՔԳ 2023-2025թթ. ներդրումային ծրագրում՝ հավելված 6

2025թ. մայիսի 21-ին, Ժամը՝ 11^{00}-ին Քաղ. Գորիս, ՀՀ

Մասնակցում են՝	
Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Մելքումյան Սմբատ Մկրտչյան Գավրուշա Աթայան Արթուր Մինասյան Արմինե Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Արևիկ Նիկոլայան

Գնման գործընթացի կազմակերպման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել էր gnumner.am, armtimes.com, itender.am, tender@tender.am էլ. կայքերում և ՔոնթուրԳլոբալ-ի պաշտոնական կայքում՝ ս/թ ապրիլի 15-ին:

1. Սահմանված ժամկետում 50մթն. ճնշման օդի կոմպրեսորի ձեռքբերման համար Coupa համակարգով տեխնիկական և գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներն են՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1.	«Դոննա Մարիա» ՍՊԸ	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյա, Հաղթանակի 40 ամյակի փ. Թիվ 20
2.	«ՏԻԿՕԷԼ» ՍՊԸ	Չեխիայի Հանրապետություն, Բելլուսովա 1862/40, Ստոդուլկի, 155 00, Պրահա
3.	«Արմիլ Թրեյդ» ՍՊԸ	ՀՀ, ք. Գորիս, Վանքի տափ 10/16

2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներն հետևյալն են՝

N	Մասնակցի անվանումը	Գնային առաջարկը, ՀՀ դրամ, առանց ԱԱՀ	Նշումներ
1.	«Դոննա Մարիա» ՍՊԸ	14,800,000.00	Մասնակիցը Կուպա համակարգի ընդհանուր դաշտում ներկայացրել է գնային առաջարկ ներառյալ ԱԱՀ, կցված գնային առաջարկից պարզ է դառնում, որ մասնակցի առաջարկը առանց ԱԱՀ կազմում է՝ 14,800,000 ՀՀ դրամ
2.	«ՏԻԿՕԷԼ» ՍՊԸ	15,000,000.00	
3.	«Արմիլ Թրեյդ» ՍՊԸ	23,900,000.00	

2.1 Ստացված առաջարկները փոխանցվել են գնահատող հանձնաժողովին՝ հայտերի մանրամասն տեխնիկական գնահատման նպատակով՝ պարզելու արդյո՞ք համապատասխանում են մրցութային փաստաթղթերում սահմանված պահանջներին:

2.2 «ՏԻԿՕԷԼ» ՍՊԸ-ի և «Արմիլ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են որոշ բացթողումներ:

3. Գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել մասնակիցներին ծանուցել թերի փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտության մասին՝ հավասար և ոչ խտրական գնահատում ապահովման նպատակով:

3.1 Հայտերի գնահատման նիստը էր նշանակվել սույն թվականի մայիսի 19-ին՝ ժամը 16:00-ին:

4. Սահմանված ժամկետում մասնակիցները ներկայացրել են պահանջվող փաստաթղթերը:

5. Ուսումնասիրելով ներկայացված առաջարկները, Գնահատող հանձնաժողովը որոշում էր կայացրել.

- ✓ Մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական առաջարկները գնահատել **բավարար**,
- ✓ Եվ առավել մրցունակ գնային առաջարկներ ստանալու նպատակով սույն թվականի մայիսի 21-ին կազմակերպել **սակարկությունների փուլ (ճապոնական աճուրդ)**,
- ✓ Մասնակիցներին պատշաճ կերպով **ծանուցել սակարկությունների փուլի մասին**՝ մինչ դրա իրականացումը:

6. Մասնակիցներին՝ **սակարկությունների փուլի մասին** պատշաճ ծանուցելուց հետո, սույն թվականի մայիսի 21-ին, ժամը 10:00-ին իրականացվել է սակարկությունների փուլ՝ Coupa համակարգով:

6.1 Սակարկությունների փուլին մասնակցել են հետևյալ մասնակիցները՝

N	**Մասնակցի անվանումը**	**Մասնակցի հասցեն**
1.	«Դոննա Մարիա» ՍՊԸ	ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյա, Հաղթանակի 40 ամյակի փ. Թիվ 20
2.	«ՏԻԿՕԷԼ» ՍՊԸ	Չեխիայի Հանրապետություն, Բելլուսովա 1862/40, Ստոդուլկի, 155 00, Պրահա

6.2 Սակարկությունների արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գնային առաջարկները հետևյալն են՝

N	**Մասնակցի անվանումը**	**Գնային առաջարկը,** **ՀՀ դրամ, առանց ԱԱՀ**
1.	«Դոննա Մարիա» ՍՊԸ	13,600,000.00
2.	«ՏԻԿՕԷԼ» ՍՊԸ	13,750,000.00

7. Ելնելով վերոգրյալից, գնահատող հանձնաժողովը Որոշեց.

- ✓ «Դոննա Մարիա» ՍՊԸ-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի, ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, կնքել մատակարարման պայմանագիր:
- ✓ «ՏԻԿՕԷԼ» ՍՊԸ ճանաչել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

Նիստին ներկա մասնակիցների անունները, ազգանունները.

Մասնակցում են՝		
Հանձնաժողովի անդամներ՝	Արամ Մելքումյան	box SIGN 4Z73PZK1-155L8J3K
	Սմբատ Մկրտչյան	box SIGN R1V2PWJ1-155L8J3K
	Գավրուշա Աթայան	box SIGN 469RY921-155L8J3K
	Արթուր Մինասյան	box SIGN 186LRP61-155L8J3K
	Արմինե Մանուկյան	box SIGN 4YPQ7PR1-155L8J3K
Հանձնաժողովի քարտուղար՝	Արևիկ Նիկոլայան	